

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ԾՈՒՐՋ

Լաւրենտի Յովհաննիսեան

Հայ մատենագիրների գործերում կան բազմաթիւ օտար բառերի մեկնութիւններ: Դրանք «ստուգաբանութեան» նախնական փորձեր են՝ բառերի կամ բառաբաղադրիչների թարգմանութիւններ, յաճախ՝ ժողովրդական ստուգաբանութեան ակնյայտ դրսեւորումներ, որոնք, սակայն, պատմական, բանասիրական, նաեւ լեզուաբանական կանխարժեքաւոր տուեալներ են՝ արժանի համակարգային քննութեան:

Այդ կարգի մեկնութիւններ շատ կան յատկապէս Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ: Ակադեմիկոս Գ. Սարգսեանի հաշուումներով՝ Պատմահայրը «ստուգաբանել» է 84 յատուկ անուն (անձնանուններ, տոհմանուններ, տեղանուններ):¹

Որպէս կանոն, մատենագիրներն օտար բառերը մեկնելիս օգտագործել են որ ասի, որ լսի, որ կարդայ, որ կոչի, որ թարգմանի «յուշող» բառերը: Բերենք որոշ վկայութիւններ Ե. դարի տարբեր հեղինակներից: «Եւ կալաւ զաշխարհս մեր... ամս քսան եւ վեց եւ յետ նորա որդի նորին, որ անուանեցաւն Շապուհ, որ լսի արքայամանուկ»². միանգամայն ճիշտ ստուգաբանութիւն է իրան. ճճի «արքայ» եւ քսիք (քսի) «որդի»: «Եւ Պերոզ արքայ Պարսից ի Հռոմայեցւոց իշխանութիւնն արշաւեաց, ուստի եւ Պերոզ

անուանեցաւ, որ է յաղթող»³: Դարձեալ ճիշտ մեկնութիւն է (համտ.՝ պարս. փիրուզ «յաղթանակ»): «... եւ շինեալ քաղաք մեծապայծառ, զոր ըստ իւրում անուանակոչութեանն Կոստանդնուպօլիս անուանէր, որ թարգմանի Հայերէն՝ Կոստանդիանոսի քաղաք, զոր ոմանք ըստ հռովմայեցի բարբառոյն Պաղատն ասեն, որ թարգմանի արքունի»⁴: «Գայր հասանէր ի քաղաքագեղն Բագաւան, որ անուանել կոչի ի պարթեւարէն⁵ լեզուէն Դիցաւան...»⁶:

3 Նոյն տեղում, II, ԿԴ:

4 Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Թուրք առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Մալխասեանցի, աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Բագրատ Ուլուքաբեանի, Երեւան, 1982, էջ 12:

5 Նշենք, որ Ագաթանգեղոսն առաջինն է (թերեւ՝ միակը), որ պարթեւերէն (պարթեւարէն) բառը (միջինհարանական լեզուներից մէկը) շրջանառութեան մէջ է դրել: Ստ. Մալխասեանցը «Հայերէն բացատրական բառարանում» պարթեւարէն գլխաբառից յետոյ գրում է. «Տե՛ս Պահլաւերէն»՝ վերջինս էլ մեկնելով այսպէս. «Միջին պարսկերէն լեզուն, որ գործ էր ածում Պարսկաստանում Սասանեանների ժամանակ»: Այս սխալ մեկնութիւնը ոչ մի հիմք չի տալիս մեղադրելու մեծ լեզուաբանին: Բանն այն է, որ մինչեւ Ի. դարի սկիզբը միջինհարանական լեզուներից գիտութեանը յայտնի էր միայն միջին պարսկերէնը: Յետագայ 80 տարիների ընթացքում գրաւոր և ուսուցանելի յայտնաբերմամբ հնարարութեամբ եղաւ տարբերակել միջինհարանական այլ լեզուներ, որոնց թում է՝ պարթեւերէնը: Յիշենք, որ Ստ. Մալխասեանցը բառարանի կազմման աշխատանքը սկսել է 1922 թուականին եւ աւարտել 1936 թուականին:

6 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ս. Կանայեանցի, աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Արամ Տէր-Ղեւոնդեանի, Երեւան, 1983, էջ 456:

1 Գ. Սարգսեան, Յատուկ անունների ստուգաբանութիւնը Մովսէս Խորենացու «Պատմութեան» մէջ, «Պատմագիտական հետազոտութիւններ», Երեւան, 2006, էջ 92:

2 Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Մ. Արեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, աշխարհաբար թարգմ. ու մեկնաբանութիւնները Ստ. Մալխասեանի, Երեւան, 1981, II, ՀԷ:

Այս թարգմանութիւն-ստուգաբանութեան մէջ ուշագրաւ է մի հանգամանք եւս. Բագաւան բառի երկու բաղադրիչներն էլ համարուում են իրանական՝ բազ «աստուած» եւ աւան «գիւղ, բնակատեղի»: Ագաթանգեղոսը թարգմանում է միայն առաջին բաղադրիչը թերեւս այն պատճառով, որ Ե. դարում այն գիտակցուում էր որպէս օտար, գուցէ եւ հանրութեան կողմից ոչ ընկալելի, իսկ աւան-ն արդէն իւրացուած եւ հայերէն գիտակցուող բառ էր: Յաջորդ պարբերութեան մէջ Ագաթանգեղոսն արդէն հայերէնացուած ձեւն է տալիս. «Ապա գայր հասանէր յանուանեալ Դիցաւանն...» (ն. տ.): Թէեւ հայերէնի իրանական փոխառութիւնների հարցին անդրադարձած համարեա ըլոր լեզուաբանները աւան-ը համարում են իրանական լեզուներից փոխառեալ, մենք, սակայն, այլ կարծիքի ենք՝ նկատի ունենալով Գ. Ղափանցեանի ստուգաբանութիւնը: Նա աւան-ը կապում է ուրարտ. eban-ի հետ: Կարելի է համարում նաեւ այն իրողութիւնը, որ աքեմենեան արձանագրութիւններում avahana-ն կիրառուած է երկու անգամ: Երկու դէպքում էլ այն վերաբերում է ոչ իրանական բնակավայրերին, ընդ որում՝ մէկը Զուզա աւանն է Հայաստանի (Ուրարտուի) տարածքում⁷:

Նման բնոյթի մի մեկնութիւն էլ կայ Խորենացու «Պատմութեան» մէջ: Երկրորդ գրքի 42-րդ գլուխը վերնագրուած է «Վասն ձեռակերտին, որ կոչի Երուանդակերտ», իսկ շարադրանքում ձեռակերտի փոխարէն դաստակերտ է. «Քաղցր է ինձ ասել եւ յաղաքս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի»: Կարելի է եզրակացնել, որ Խորենացու ապրած դարաշրջանում դաստ-ը գիտակցուում էր օտար, անհասկանալի, իսկ կերտ-ը՝ հայերէն: Մեր ենթադրութիւնը հաստատուում է նաեւ գրաբարի

բառարանների տուեալներով: Նոր Հայկագեան բառարանը (այսուհետեւ՝ ՆՀԲ) դաստ բառով ունի մէկ վկայութիւն ԺԳ. դարից, իսկ այդ բառով կազմութիւնները իրանական փոխառութիւններ են. դաստակերտ, դաստապակ, դաստապան, դաստառակ, դաստիարակ: Կերտ բաղադրիչով կան բազմաթիւ հայկագեմութիւններ. Տիգրանակերտ, աստուածակերտ, ակարակերտ, փայտակերտ, ըղձակերտ, մոմակերտ, քարակերտ եւ այլն:

Օտար բառերի մեկնութիւններն ուշագրաւ են նաեւ բառիմաստների, հնչիւնական-հնչիւնափոխական որոշ դրսեւորումների առումով. օրինակ՝ վերը նշուած Շապուհ «արքայամանուկ» մեկնութիւնից ենթադրելի է, որ մանուկ-ը նշանակում է «որդի»: Առձեռն բառարանն այդ իմաստը չի՝ արձանագրում⁸, Արմատական բառարանը՝ նոյնպէս: Վերջինում մանուկ բառին վերագրուած են հետեւեալ իմաստները. «1. երախայ, 2. պատանի, սպասաւոր, զինուոր. 3. փոքր, մանկահասակ» (տե՛ս Արմ., Մանուկ բառայօդուածը): Կարծում ենք, որ գրաբարում մանուկ-ի «որդի» իմաստը կարելի է համարել հայերէնի տարածքային (բարբառային) տարբերակ կամ էլ Խորենացու բառակերտումը: Այդօրինակ կիրառութեան հանդիպում ենք եւ «Ալեքսանդր Մակեդոնացու պատմութիւնը» գրքում. «Մե՛ծ թագաւոր Դարեհ, այս դեսպանս նոյն ինքն Աղեքսանդրոս՝ Մակեդոնացի Փիլիպոսի մանուկն է»⁹: Մեծարժէք այդ գործը թարգմանել է Խորենացին: Ի դէպ, Մանուկ «զինուոր»-ն էլ Ե. դարի ոչ թարգմանական գործերում առաջինը թերեւս կիրառել է Խորենացին. «Իսկ ի լինել մարտին՝ հարկանի զօրն Արայի, մեռանի եւ Արա ի պատերազմին ի մանկանցն Շա-

7 Տե՛ս Լ. Յովհաննիսեան, Հայերէնի իրանական փոխառութիւնները, Երեւան, 1990, էջ 221-222:

8 Տե՛ս Առձեռն բառարան հայկագեան լեզուի, Վեճետիկ, 1865, Մանուկ բառայօդուածը:

9 Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ, աշխատասիրութեամբ Յասմիկ Սիմոնեանի, Երեւան, 1989, էջ 402:

միրամայ» (Ա, ԺԵ): Ստ. Մալխասեանը թարգմանել է. «Արան էլ ընկնում է պատերազմի մէջ Շամիրամի կտրիճներին» (աւելի ճիշտ կը լինէր՝ զինուորներին կամ զինուորների կողմին):

Խորենացու վկայած ներքոյիշեալ օրինակներում կարելի է տեսնել իրանական լեզուներին բնորոշ հնչիւնական-հնչիւնափոխական երեւոյթներ: «Եւ անուանին Ամատունիք, որպէս թէ Եկք» (II, ԾԷ): Խորենացին նկատի ունի միջ. պարսկ., նոր պարսկ. āmadan «գալ»-ի անց. կատ. հիմքը՝ āmad: Իրանական Ը-ն Խորենացին արտայայտել է խուլ տ-ով: Սա չպէտք է դիտել «ստուգաբանութիւնը» հաւաստի դարձնելու հնարանք: Վաղ շրջանի միջին-իրանական լեզուների (պարթեերէն, միջին պարսկերէն) յետձայնաւորային եւ միջձայնաւորային դիրքի է-ն ու շրջանում է դարձել ձայնեղ Ը: Ուրեմն՝ Խորենացին արձանագրել է աւելի հին ձեւը: Այդպէս է եւ Մարմետ-ի ստուգաբանութեան դէպքում. «Մար ամատ, որ թարգմանի Մարս եկն» (II, ԽԶ):

Առաջին հայեացքից կարող է տարօրինակ թուալ (գոնէ հնչիւնափոխական առումով) Բագրատունիք-Բագարատ-Բագադիա կապը. «Եւ ինձ թուի, թէ որ այժմդ կոչին Բագրատունիք Բագարատ՝ Բագադիա է դա» (II, ԿԳ): Բանն այն է, որ հին պարսկ. Ը-ն միջինիրանական լեզուներում եւ այդ լեզուներից հայերէնին անցած բառերում միջձայնաւորային դիրքում դառնում է Ի. Հմտ.՝ apadāna-ապարանք, spāda-սպար(ապետ), apēdāt-ապիրատ եւ այլն: Խորենացին, անշուշտ, տեղեակ էր այս հնչիւնափոխական իրողութեանը:

Ակնյայտ է, որ հայ մատենագրութեան մէջ օտար բառերի մեկնութեան թէ՛ քանակական, թէ՛ գիտական, թէ՛ լեզուական տարաբնոյթ փաստարկները շրջանառութեան մէջ դնելու առաջնայնութիւնը պատկանում է Խորենացուն:

Անդրադառնանք Եզնիկ Կողբացու մի «ստուգաբանութեան», որում նոյնպէս առկայ է «որ թարգմանի» ընդունուած արտայայտութիւնը, որը, սակայն, այլ դրսեւորում ունի: Խօսքը Զրուան յատուկ անուան մասին է: «Մինչ չեւ բնաւ էր ինչ, ասեն, ոչ երկինք եւ ոչ երկիր եւ ոչ այլ ինչ արարածք՝ որ յերկինս կամ յերկրի, Զրուան ոմն անուն էր, որ թարգմանի բախտ կամ փառք»¹⁰: Այս վկայութեան մասին պրոֆ. Ա. Աբրահամեանը գրում է. «Յայտնի է, թէ Եզնիկն ինչ աղբիւրի հիման վրայ է նշում «բախտ կամ փառք»¹¹ իմաստները:

Նախ՝ Զրուան բառի ստուգաբանութեան մասին. ընդունելի է համարում Հիւբշմանի ստուգաբանութիւնը, ըստ որի՝ իրան. ZIVĀN «ժամանակ»-ը, աստուծուն վերագրուելով, դարձել է յատուկ անուն¹²:

Այս ստուգաբանութեան անուղղակի հաստատումն ենք գտնում Եզնիկի մի այլ վկայութեան մէջ, որտեղ նա մերժում է Զրուանի մշտնջենաւոր գոյութիւնը. «Զրուան է էր մշտնջենաւոր, այլ յուժեքէ եղեալ» (Եզն., 100):

Զրուանն իրանական դիցաբանութեան մէջ անսահման ժամանակի աստուածն է (ինչը հաստատուում է նաեւ բառի ստուգաբանութեամբ):

Զրուանին վերագրած «բախտ» հասկացութիւնը Եզնիկը շեշտում է մի քանի անգամ եւ քննադատում. «Այլ թէ եւ բախտն եւս էր՝ որպէս ասենն՝ Զրուանն, ապաքէն ուրուք բախտ էր. եւ ո՞վ էր արդեւք՝ ոյր բախտն էր: Զի բախտ անձնաւոր ինչ է, այլ դէպք աշողութեան» (Եզն., 106): Բերենք վերջին նախադասութեան թարգմանութիւնը. «Որովհետեւ բախտը

10 Եզնիկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց, թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Ա. Ա. Աբրահամեանի, Երեւան, 1994, էջ 92:
11 Նոյն տեղում, էջ 314, ծան. 233:
12 Նոյն տեղում:

գոյաւոր բան է, այլ՝ յաջող պատահմունք» (ն.տ., էջ 107): Այս փաստարկով Եզնիկը պարսկական կրօնի քննադատութեան իր հիմնական դրոյթն է զարգացնում. «Արդ եթէ բախտ էր Զրուանն՝ է էր ինչ անձնաւոր. ուստի յայտ է՝ թէ բնաւ եւ էր իսկ ոչ Զրուանն» (Եզն., 106): Այս համատեքստում էլ նա արձանագրում է իր նշանաւոր փիլիսոփայական եզրայանգումը. «Մեծի ծաղու արժանի է. զի է էրն է էին վասն է էին յաշտ առնէր» (ն.տ.): Նախքան Զրուան-բախտ մեկնաբանմանն անցնելը՝ նկատենք, որ «աստուած», «ժամանակ» եւ «ճակատագիր» հասկացութիւնները դիցաբանութեան մէջ սերտօրէն կապուած են. ճակատագիրը ժամանակի մէջ կատարուող (կատարուելիք) երեւոյթ է, որը տնօրինում է աստուած: Հին յունական դիցաբանութիւնից յայտնի է, որ «Քրոնոսը վատաւ է էր, որ իշխանութիւնն ընդմիջտ կը մնայ իր ձեռքում. նա երկիւղ ունէր, որ իր դէմ կ'ապստամբեն զաւակները եւ իրեն կը դատապարտեն նոյն ճակատագրին, ինչ ինքը արժանացրեց իր հօրը...»: «Օլիմպոսում ճակատագրի աստուածուհին էր Տիքէն (ըստ հռոմէացիների՝ Ֆորտունան)»¹³: Ի դէպ, ժամ-ն ունի նաեւ «իւրաքանչիւր կենդանակերպի 1800-երորդ մասը՝ որով աստղաբաշխներն ու ախտարագէտները մարդու բախտն են որոշում» իմաստը¹⁴:

Զրադաշտական կրօնի «բախտ» հասկացութեանը անդրադարձել է նաեւ Եղիշէն՝ անշուշտ, ծանօթ լինելով Եզնիկի երկին (որոշ հատուածներ երկու հեղինակների գրքերում նոյնն են): Միհրնբրսեհ Վզուրկ հրամանատարը հայոց մեծերին

ուղղուած նամակում քննադատում է քրիստոնէական կրօնի որոշ դրոյթներ՝ բնականաբար, հակադրելով զրադաշտականին. «Մի՛ հաւատայք առաջնորդացն ձերոց, զոր նացրածիսդ անուանէք. քանզի յոյժ են խաբեբայք. զոր բանիւք ուսուցանեն, գործովք ոչ առնուն յանձն... ծաղր առնեն զանուն բախտի եւ զփառաւորութիւն յոյժ աչպանեն...»¹⁵ (ընդգծումը մերն է - Լ. Յ.): Զանուն բախտի ասելով՝ Միհրնբրսեհը նկատի ունի Զրուանին: Երուանդ Տէր-Միհնասեանը յիշեալ հատուածը թարգմանել է. «...ծաղրում են բախտի անունը եւ խիստ պախարակում են փառաւորութիւնը» (էջ, 53): Մեր կարծիքով՝ «անունը» այստեղ իր հիմնական իմաստով է թարգմանուած: ՆԶԲ-ն Անուն բառայօդուածում նշում է նաեւ «փառք, համբաւ, հռչակ, փառք եւ պարծանք» իմաստները: Ուրեմն՝ պէտք է թարգմանել՝ «ծաղրում են բախտի (իմա՝ Զրուանի) հռչակը (համբաւը, փառքը)»:

Ի հակադրութիւն քրիստոնէութեան՝ զրադաշտականութիւնն առաջնային դեր է յատկացնում ճակատագրին. «Մարդիկ ճակատագրով են մեռնում, թէ՛ առանց ճակատագրի» հարցադրմանը Եզնիկը պատասխանում է. «Նախ պիտի իմանանք, թէ ինչ է ճակատագիրը, եւ «ճակատագիր» հասկացութիւնը որտեղից է տարածուել աշխարհում: Մահուան համար սահմանուած ճակատագիր Աստուածատուր գրքերում ոչ մի տեղ չենք գտնում» (Եզն., 125):

Մի հանգամանք եւս. գրաբարում բախտ, ճակատագիր եւ հրաման բառերը հոմանիշներ են: Եզնիկի գրքում բախտ բառի բոլոր գործածութիւնները զրադաշտական կրօնի հերքման համատեքստում

13 Ն. Ա. Կուն, Հիմն Յունաստանի լեզունը մտաւարկները, Երեւան, 1956, էջ 21-29:
14 Տե՛ս Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հտ. II, Երեւան, 1973, Ժամ բառայօդուածը: Ծարադրանքում Աշուած բառարանին անդրադառնալիս օգտագործել ենք Արմատական բառարան բառակապակցութիւնը:

15 Եղիշէ, Վասն վարդապետի Էջմիածնի պատերազմի, թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Ե. Տէր-Միհնասեանի, Երեւան, 1989, էջ 52:

են՝ առնչուելով Հիմնականում Ջրուանի գոյութեանը եւ ուսմունքին:

Ջրուանն իրանական դիցաբանութեան մէջ ոչ միայն անսահման (անվերջ) ժամանակի, այլեւ ճակատագրի աստուածն էր¹⁶:

Անդրադառնանք ճակատագիր հասկացութեան մեկնաբանութեանը միջինիրանական ամենանշանաւոր գործերից մէկում, որը կոչուում է «dādestān I mēnōg I xrad»¹⁷: Գրքի 24-րդ գլխում կարդում ենք. «Իմաստունը հարցնում է բանականութեան Ոգուն՝ հարստութեան տիրանալու, բարի գործեր կատարելու եւ արժանիքների համար աստուածները մարդկանց տալի՞ս են ինչ-որ բան»: Ոգին պատասխանում է. «Տալիս են, եւ դա այն է, որ անուանում են ճակատագիր եւ նախասահմանութիւն. բաշխում են այն, ինչ որ լինում է սկզբում՝ ճակատագիրը, յետոյ՝ նախասահմանութիւնը»¹⁸: Բնագրում ճակատագիրը արտայայտուած է baxt, իսկ նախասահմանութիւնը՝ baYōbaxt բառով: Ահա մի հատուած էլ 27-րդ գլխից. «Երկրային բոլոր գործերն առաջանում են ճակատագրի կանխորոշմամբ... որն ինքը Ջրուանն է՝ հզօր եւ երկարածամկէտ կառավարիչը»¹⁹:

Աւելորդ չենք համարում նշել, որ բախտ բառի արմատն է իրանական bag/baž-ը. «բաժանել, բաշխել», որի անցեալ դերբայն է գնդ. baxta=սանս. bhakta՝ բախտն ըմբռնելով իբրեւ ի վերուստ բաշխուած, բաժանուած վիճակ» (տե՛ս Արմ., Բախտ բառայօդուածը): Իսկ Եզնիկն էլ կարծում է, որ չպէտք է հաւատալ «ի բաշխս բախտից» (II, ԺԲ):

16 St'ya *История Древнего Востока*; М., 1999, с. 440, նաեւ՝ Գ. Սարգսեան, *Պատմագիտական հետազոտութիւններ*, Երեւան, 2006, էջ 109:
17 St'ya *Зороастрийские тексты. Суждения духа разума (Дадестан-и меног-и храд)*, издание подготовлено О. М. Чунаковой, М., 1997:
18 Նոյն տեղում, էջ 99:
19 Նոյն տեղում, էջ 100:

Ամփոփենք: Եզնիկի՝ «Ջրուան ոմն անուն էր, որ թարգմանի բախտ կամ փառք» նախադասութեան մէջ բախտ-ը ոչ թէ Ջրուան անուան ստուգաբանութիւնը կամ թարգմանութիւնն է, այլ նրա՝ որպէս աստուած (կամ մարդու) դերի, գործունէութեան մատնանշումը:

Ինչ վերաբերում է Եզնիկի գրքի յիշեալ հատուածի փառք-ին, ապա այն նոյնպէս չպէտք է դիտել Ջրուան բառի թարգմանութիւն, այլ նրա աստուածային էութեան բնութագրիչներից մէկը: Եզնիկը քննադատում է Ջրուանի պաշտամունքը նաեւ այն բանի համար, որ եթէ նա կատարեալ լինէր, ինքը կը ստեղծէր երկինքն ու երկիրը եւ զոհ չէր մատուցի որդի ունենալու համար: Բացի դրանից, բերում է նաեւ զրադաշտականների պատասխանը. «Փառաց առնէր դյաշտն» («Փառքի համար էր զոհ անում». Եզն., 96-97):

Փառքը, փառաւորուելը խորթ չեն աստուածներին եւ ոչ միայն զրադաշտական: Եզնիկի «Եղծ աղանդոց հեթանոսացն» գրքում կարդում ենք. «Ո՛ր մեղ է վասն կուրութեանդ. դորա՞, թէ ծնողաց իւրոց, եւ նա ասէ՝ թէ ոչ դորա եւ ոչ ծնողաց իւրոց, այլ վասն փառացն Աստուծոյ, զի փառաւորեսցի ի դմա Աստուած», «այլ աստուած փառքի համար է այդ, որ աստուած դրանով փառաւորուի» (էջ 64-65):

Աստուած փառաւորմանն են նուիրուած այսօր էլ գործածական «փառք քեզ Աստուած», «փառք Աստուած», «փառքդ շատ Աստուած» եւ նման բառակապակցութիւններ:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՏԱՂԵՐԻ, ԳԱՆՁԵՐԻ ՆՈՐԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄ ԵՒ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Արմինէ Աւետիսեան

Սոյն յօդուածում փորձ ենք արել Հնարաւորինս վերլուծել Նարեկացու ստեղծած նորաբանութիւնների ձեւութային-բառակազմական նկարագիրը՝ նպատակ ունենալով պարզել գրաբարի բառակազմական Հնարաւորութիւնները Ժ. դարում, եւ Նարեկացու անհատական-ստեղծագործական դերը հայերէնի բառապաշարի հարստացման գործում:

Տաղերում եւ գանձերում եղած նորաբանութիւններն առանձնացրել ենք՝ ուսումնասիրելով Ե.-ԺԱ. դարերի մատենագրութիւնը «Հայ մատենագրութեան թուանշային գրադարանի» միջոցով եւ աշակցութեամբ¹: Նախ՝ կազմել ենք տաղերի եւ գանձերի թուային տարբերակն Արմինէ Քեօշկերեանի կազմած ժողովածոյի Հիման վրայ², այնուհետեւ՝ համակարգչային ծրագրի օգնութեամբ կազմել ենք տաղերի եւ գանձերի համաբարբառն ու յաճախականութեան բառարանը: Ստացուած ողջ բառապաշարը փնտրողական ծրագրի միջոցով ուսումնասիրել ենք «Հայ մատենագրութեան թուանշային գրադարանում»: Այն բառերը, որոնք մատենագրութեան մէջ Նարեկացուց առաջ չեն հանդիպում, համարել ենք Նարեկացու նորաբանութիւններ, որոնք ստուգել ենք ՆՀԲ-ի էլեկտրոնային տարբերակում, ինչպէս նաեւ՝ այլ բառարաններում:

Բառամաստային համակարգի զարգացումն առաջին հերթին պայմանաւորուած է նորակազմութիւնների կամ նորաբանութիւնների առկայութեամբ: Նորաբանութիւնների մէջ կարեւոր տեղ են զբաղում հեղինակների կողմից ստեղծուած բառերը՝ հեղինակային նորաբանութիւնները, որոնք մեծ արժէք ունեն բառապաշարի հարստացման գործում: Այս առումով անչափ կարեւոր է Գրիգոր Նարեկացու դերը:

Սոյն ուսումնասիրութիւնն ուղղուած է Հայ լեզուաբանութեան մէջ գրեթէ չուսումնասիրուած մի խնդրի՝ Գրիգոր Նարեկացու տաղերում եւ գանձերում եղած նորաբանութիւնների յայտնագործմանն ու քննութեանը:

Ուսումնասիրութեան Հիմնական նպատակներն են՝

- Ա. Գիտականօրէն արժեւորել Հին Հայերէնի բառաստեղծման Հնարաւորութիւններն ըստ Նարեկացու նորաբանութիւնների:
- Բ. Կատարել նորաբանութիւնների բառակազմական կաղապարների դասակարգում:
- Գ. Քննել Ժ. դարի հայերէնի բառամաստային առանձնայատկութիւնները:
- Դ. Առանձնացնելով եւ ուսումնասիրելով նորաբանութիւնները՝ նպաստել մեծ բանաստեղծի լեզուամտածողութեան իւրօրինակ դրսեւորումների բացայայտմանը:

Նարեկացու տաղերի եւ գանձերի ուսումնասիրութեամբ զբաղուել են միջնա-

1 Հայ մատենագրութեան թուանշային գրադարան, <http://www.digilib.am>:
2 Գրիգոր Նարեկացի, *Տաղեր եւ գանձեր*, աշխատասիրութեամբ Արմինէ Քեօշկերեանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1981: